



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschakъ»,
Տէլէֆօն № 253.

Պարագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անել վիճակ.— ԵՆԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հե-
տաքերական վիճակ. Նամակ Սոնախից. Նամակ
Գանձակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Ֆրանսիայից. Նամակ Բոլորիայից. Արտաքին
լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒՆ
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ. Յովսէփ Կաթո-
ղիկոս Արղութեան.

ԱՆԵՆ ՎԻՃԱԿ

Թիւրքաճայ գաղթականների հետ միա-
սին մեր երկիրը եկան եւ բաժանանք, ո-
րոնք չը կարողացան վերադառնալ իրանց
գիւղերը եւ մնացին մեր երկրում: Այդ բա-
ճանների դրութիւնը մինչեւ այժմ որոշ-
ված չէ եւ նրանց համար ստեղծվել է մի
տարօրինակ վիճակ: Գաղթականները նը-
րանք, որոնք հասարակ հողազորներ, ար-
հեստաւորներ, փաճառականներ եւ, ընդհան-
րապէս վերցրած, աշխարհական անձինք
էին, գործ գտան իրանց համար եւ յարմար-
վեցին տեղական պահանջներին: Իսկ բա-
ճանները ոչինչ չը կարողացան անել:
Սկզբում նրանք պտտում էին գաղթական-
ների շրջանում, բայց երբ գաղթականնե-
րի համամիջոցները սկսեցին կազմալուծ-
վել եւ գաղթականները ցրվեցին մեր երկ-
րի զանազան կողմերը աշխատանք եւ զբաղ-
մունք որոնելու, այն ժամանակ բաճանա-
ները մնացին առանց հօտի, առանց ժողո-
վրդի: Առաջ եկաւ մի անտանելի դրու-
թիւն, որ եւ շարունակվում է մինչեւ այժմ:
Գաղթական բաճաններին թող չէ
տրվում հովիւ գրվել նստակեաց եւ բնիկ
կովկասաճայերի վրա. իսկ գաղթականները
չեն կազմում մշտական եւ մի տեղում ապ-
րող կամքեր, որպէս զի կարողանային պա-
հել իրանց հովիւներին իրանց հետ միա-
սին անբաժան:

Ժիշտ է, այդ գաղթական բաճանները
կարող են, իբրեւ օգնականներ, իբրեւ յանձ-
նարարութիւն կատարող բաճաններ, տեղ
գտնել մեր երկրի բաճանների մօտ. բայց
դա մի հանգամանք է, որ դժուարութեան
մէջ է դնում երկու կողմերին էլ: Գաղթա-
կան բաճանան կարված է իրան հովանա-
ւորողից, իսկ հովանաւորըն էլ ներկայա-
նում է պաշտօնապէս պատասխանատու
անձ այն բոլոր գործողութիւններին համար,
որ թող կր տայ իրան օգնական բաճանան:
Հոգեւոր իշխանութիւնը պէտք է ելը

ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ

ՅՈՎՍԵՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԴՈՒԹԵԱՆ

Այսօր, մարտի 9-ին, լրանում է հարիւր տարի այն
օրից, երբ Թիֆլիսում վարձանվից Յովսէփ Կաթողիկոս
Երկայնարագուկ-Նորդեթեան:
Այս դարեկորն չը պիտի անկատարի մնա մեր
մէջ: Այժմ, երբ պատրաստվում են տոնախմբութիւն-
ներ Անգրիկովկասում ուսաց տիրապետութիւնը մըտ-
ցնելու հարկաւանակի առիթով, կարելի է չը լիշատա-
կել Նորդեթեանին, որ այնքան նշանավոր դեր է կա-
տարել պատմական այդ մեծ գործի մէջ:
Բայց Յովսէփ Կաթողիկոսը միայն այդ դերով չէ նը-
շանաւոր: XVIII դարի հայ հոգեւորական գործիչներից
մէկն է նա, մէկը այն հայ հոգեւորական, որոնք թիւը մե-
ղանում, դժբախտաբար, շատ չէ:
Անա այդ մարդու կենսագրութիւնն է, որ եւ, մահ-
վան հարկաւանակի առիթով, ներկայացնում եմ հայ
հասարակութեան:
Յովսէփ Կաթողիկոսի մասին գրաւոր լիշատակու-
թիւններ շատ կան եւ ձեռքի տակ ունեցել եմ հա-
մարեա այն ամենը, ինչ տպված է մինչեւ այժմ: Բայց
պէտք է խոստովանել, որ այդ նշանավոր մարդու ամ-
բողջ պատկերը կարելի է լինի նկարել միայն այն
ժամանակ, երբ կը հրատարակվին նրա բոլոր գրա-
գրութիւնները: Դրանց մի նշանավոր մասը, բաղկացած
էրեք հազարի հատորներից, գտնվում է հնագիտ. պ-
նէքսանդր Երեւանի մօտ: Երեւանի հնագէտը այն-
ձէքսանդր Երեւանի մօտ: Երեւանի հնագէտը այն-

գտնէ բաւարար կերպով վճռելու այս
կարեւոր խնդիրը: Ժամանակ է վերջապէս
գործնական ցուցումներ տալ գաղթական
բաճաններին, որովհետեւ նրանք չեն կա-
րող մնալ առանց որոշ դիրքի եւ պարագ-
մունքի: Մուրալ եւ ժողովարարութեամբ
պարագիւր—ոչ ոք մեզինց չի ների այդ
բաճաններին: Իսկ ուրիշ աւելի պա-
տաւոր էլը հոգեւոր իշխանութիւնը չէ
ցոյց տալիս նրանց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՎՃԻՌ

«МОСК. ЛЕТОПИСЬ» լրագիրը հաղորդում է հե-
տեւեալը. «Մի երեխայի հայր պահանջել էր
իրանից առանձին ապրող կնոջից յետ տալ ի-
րանի փոքրահասակ երեխային: Գործը
քննող դատաստանական պալատը մերժեց հօր
պահանջը այն հիման վրա, որ, թէեւ այդ ա-
մուսիները չեն բաժանված դատաստանական
վճռով, բայց երկուսն էլ չեն ցանկանում նո-
րից միասին ապրել, եւ որ երեխայի քննող
հասակին աւելի համապատասխան է մայրա-
կան խնամքը, քան հայրական դատարարու-
թիւնը, մօր աչքից հեռու: Սենատը կանօնաւոր
է ձանաչել պալատի այդ վճիռը հետեւեալ նկա-
տուններով: Ընդհանուր կանօնով, երեխաներին
դատարարակելու եւ ծուր պահելու իրաւունքը,
որ ծնողական իշխանութեան ամենակարեւոր
արտայայտութիւններից մէկն է, պատկանում
է երկու ծնողներին միասեղ, եւ այնպէս, որ
տարաձայնութեան դէպքում գերակշռութիւն
են ստանում հօր կարծիքը եւ կամքը: Բայց
այդ կանօնը, որով ենթադրվում է ամուսիննե-
րի միասեղ ապրելը, որ ընտանիքի կանօնաւոր
վիճակն է, ակնհայտաբար չէ կարող գործադր-
վել հակառակ դէպքում, երբ, ինչպէս պալա-
տը հաւատարմ է ներկայ գործում, ամուսին-
ները, ջոկ ջոկ ապրելով, երկուսն էլ համա-
ձայն չեն նորից սկսել միասին ապրել: Այդ
դէպքում, որ անհնար է դարձնում վերոյիշեալ
իրաւունքի միասեղ գործադրութիւնը ծնողնե-
րի կողմից, խօսք անգամ չէ կարող լինել որ
եւ չէ անպայման առաւելութիւն վերագրելու
հօրը մօր համեմատութեամբ այդ իրաւունքը
գործադրելու մէջ, որովհետեւ օրէնքը ոչ մի
տեղ այդպիսի առաւելութիւն չէ ընդունում
այն հօր նկատմամբ, որ կամաւոր կերպով հրա-
ժարվում է ապրելու երեխայի մօր հետ միա-
սին: Այդ հիման վրա եւ բացի զորանից ի նկա-
տի ունենալով, որ ծնողական իշխանութիւնը

քան բարի եղաւ, որ սիրալիր պատրաստակամութիւն
լայտեց իմ տրամադրութեան տակ դնել այդ անտիպ
մնացած, բայց թանկագին պատմական փոխանակու-
թից քաղած իր տեղեկութիւնները, ծաղկում եմ պ-
րեցեցան իմ խորին շնորհակալութիւնը:

I

Ո՞վ է ԵՐ ԱՐԴՈՒԹԵԱՆԸ

Հայաստանը սկզբից եւ եթ հզօր, նուաճող
ազգերի տիրապետութեան տակ է եղել: Դեռ
այն ժամանակ, երբ նա նոր էր երեւան գալիս
պատմութեան ասպարէզում, երբ, ինչպէս եւն-
թագրում են *, նոր էր արեւմուտքից դէպի
արեւելք առաջանում, ասիական ծայրայեղ
բննապետութիւնների նախնայոր Ասորեստանը
ոչնչացաւ, տեղի տալով Պարսկաստանին: Պար-
սից տիրապետութիւնը տարածվեց հայերի վրա
դեռ այն ժամանակ, երբ նրանք չէին էլ հասել
Արարատին եւ Արաքսի հովտին: Այդ բանը
տեղի ունեցաւ Քրիստոսից մօտ եօթը դար ա-
ռաջ, եւ այնուհետեւ մինչեւ VII դարի կէսը
Քրիստոսից յետոյ պարսկական ազդեցութիւնը
անասան էր հայոց երկրի եթէ ոչ ամբողջու-
թեան մէջ, գոնէ նրա մի նշանաւոր մասում:
Եղել են ընդհարումներ այդ տիրապետու-
թեան մէջ: Այնքանազոր Մակեդոնացու արշա-
*) Масперо, «Древняя история народовъ Восто-
ка», М. 1895, т. XIII.

հաստատված է ոչ միայն ծնողների օգտի հա-
մար, այլ եւ զլիսաւորապէս զաւակների օգտի
համար, որի մասին նրանք պէտք է խնամը
տանեն՝ օգտվելով այդ իրաւունքից, — պէտք է
ընդունել, որ ներկայ դէպքի նման դէպքերում,
դատարանից է կախված թողնել երեխային մօր
խնամատարութեանը, եթէ դատարանը գտնէ,
որ այդ է պահանջում երեխայի օգուտը, ինչ-
պէս այդ անվում է այն դէպքում, երբ ամու-
սինները առանձին են ապրում ամուսնալուծա-
կան գործ սկսելուց յետոյ:

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Մեր խաւար եւ յետ ընկած քաղաքում էլ
նկատվում են միեւնոյն երեւոյթներ: Մենք
էլ ունենք գործիչներ, որոնց գիտնէր պատեւ
Այդպիսի գործիչ է Սոնախի հայոց բեմի վետե-
րան պ. Վարդան Ենիկոյիկեան, որի 25-ամեայ
բեմական գործունէութեան շրջանը լրանում է
այս տարի: Մի խումբ յարգողներ որոշել են
զատիկից յետոյ տօնել Վ. Ենիկոյիկեանի 25-
ամեայ յօբելեանը: Ընտրված է մասնաժողով
քաղկացած հինգ հոգուց՝ որը պէտք է հոգայ յօ-
բելեանի կարեւոր պատրաստութիւնները: Յօբե-
լեանը պէտք է կատարվի ապրիլի 8-ին. այդ
օրը կը տրվի հանդիսաւոր ներկայացում՝ մաս-
նակցութեամբ յարգելի վետեանի: Ինքը պ-
յօբելեանը իր յօբելեանի համար ընտրել է
«Պէպօ» կոմէդիան, որի մէջ միշտ փայլում աջո-
ղութիւն է ունեցել. խաղալով Պէպօյի դերը:
Պ. Վարդան Ենիկոյիկեանը առաջին անգամ
բեմ գուրս եկաւ Սոնախում 1876 թ. դեռ եւս
աշակերտ եղած ժամանակ: Այդ թիւից նա չա-
րունակ քանուհիներ տարի մասնակցել է հայոց
ներկայացումներին, որքան ներել են իր ոյժերը
եւ տեղական հանգամանքները: Պ. Ենիկոյիկեան
միապաճ նախկին ուսուցիչ Դաւիթ Տէր-Ստե-
փանեանի հետ՝ կազմակերպեցին Սոնախում
պարբերական հայոց ներկայացումներ, որոնք
առաջ չեն եղել կամ մի քանի անգամ են տեղի
ունեցել. այս երկու պարոններին համարձակ
կարելի է անուանել Սոնախի հայոց բեմի հիմ-
նադիրներ: Ենիկոյիկեանի եւ Տէր-Ստեփա-
նեանի գործունէութիւնը բնորոշւում էր մասնա-
ւանդ ութնական թվականների սկզբում:
Անցաւ ժամանակ, փոխվեցին հանգամանքները,
սակայն պ. Ենիկոյիկեանը հաւատարիմ մնաց
հայոց բեմին, ղեկավարելով մինչեւ օրս հայոց
ներկայացումները:
Հարկաւոր է այստեղ աւելացնել, որ Վ. Ենի-
կոյիկեան՝ վարելով հայ ուսուցչի պաշտօն զա-

ւանքը մինչեւ Հնդկաստան հեղինակ ազգի ձեռքը
տուեց Առաջաւոր Ասիան եւ հայերը մի ժա-
մանակ մակեդոնական իշխանութեան հպատակ-
վեցին: Ապա նորից ուժեղացաւ Պարսկաստա-
նը, նորից տիրեց իր երկրներին. բայց մա-
կեդոնական իշխանութեան տեղ Առաջաւոր Ա-
սիայում երեւան եկաւ մի մեծ արեւմտեան
պետութիւն—Հռոմը: Հայաստանը մի առ ժա-
մանակ էլ ստիպված էր փոփոխակի հպատակ-
վել այս երկու վիթխարի խաղաղութիւններին—
Պարսկաստանին եւ Հռոմին:
IV դարում (Ք. յ.) Հռոմէական պետութիւնը
բաժանվում է արեւելեան եւ արեւմտեան մա-
սերի: Արեւելեանը, որ կոչվում էր նաեւ Բիւ-
զանդական պետութիւն, շարունակեց ընդհա-
րունները Պարսկաստանի հետ. Հայաստանը,
որորովեւլով երկու կողմերի մէջ, չը կարողա-
ցաւ ինքնուրոյնութիւն պահպանել. պարսիկ-
ները եւ Բիւզանդական յոյները բաժանեցին
նրան իրանց մէջ: VII դարի կէսից պարսիկնե-
րի տեղը բռնում են արաբները, որոնք շարու-
նակում են կտրել Բիւզանդիայի դէմ եւ դառ-
նում են Հայաստանի մեծագոյն մասի տէրը:
Այդ բոլոր լուծերը, որոնք յաջորդում էին մի-
մեանց Հայաստանում, չափազանց ծանր էին
հայերի համար: Նրանք կոտորվում էին անվերջ
պատերազմների մէջ, ճնշված էին հարկերի
ծանրութեան տակ եւ հազիւ կարողանում էին

նազան տեղերում՝ ամեն տեղ մասնակցութիւն
է ունեցել ներկայացումներին մէջ: Վ. Ենիկոյի-
կեան առաջինն էր, որ գուրս բերեց հայ օրիորդ-
ները այնքան էլ չեն վախենում ժողովրդի
բամբասանքից: Շեշտեմք եւ այն, որ պ. Ենի-
կոյիկեան իր օգտի համար չէ աշխատել, այլ
ներկայացումներ կազմակերպել է մեծ մասամբ
բարեգործական նպատակով:

Յարգել այսպիսի մարդու գործունէութիւնը
մեր սրբազան պարտաւորութիւնն է: Մենք
պէտք է գնահատենք մեր գործիչներին եւ
ոգեւորենք նրանց: Մեր հասարակութեան վրա,
նոյնպէս եւ այն սոցիալիստների վրա, որոնք
ցրված են Կովկասի եւ Ռուսաստանի քաղաք-
ներում եւ որոնք յարգում են պ. Ենիկոյի-
կեանի Սոնախի նուիրած բեմական գործու-
նէութիւնը, բարոյական պարտաւորութիւն կայ՝
աջակցել մասնաժողովին արժանապաշտել կերպով
տօնելու յարգելի վետեանի 25-ամեայ գործու-
թիւնը:

Յ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մարտի 3-ին

Նորերս մեր քաղաքում, որը ինչպէս այդ
յայտնի է ամենուրեք, շատ աղքատ է հաս-
րակական կեանքի միջխառն արտայայտու-
թիւններով, տեղի ունեցաւ մի շատ հաւա-
գիւտ ուրախութիւն՝ հանդէս-տեղական
պիւր զարդի նոր շինութեան հիմնադրութիւնը:
Այդ շինութիւնը ձեռնարկել է Գանձակի քաղա-
քային վարչութիւնը, որ այդպիսով իր գոյու-
թեան ընթացքում իր ամենանշանաւոր հանրօ-
գուտ քայլն է կատարում: Նախանշելով նրա
վրա ծախսվելու է մօտ 60,000 ռուբլի: Այդ գու-
մարը աւելի մեծ կը լինէր, եթէ շինութեան
համար անհրաժեշտ գետնի մի մասը չը նուիր-
վէր զարդին:

Գանձակի համար արտասովոր այդ խոշոր
նուիրատուութիւնը արել են գանձակից եղբւ.
Մարկաբեանները, որոնք այդ պատճառով ար-
ժանի են հրապարակական շնորհակալութեան:
Նրանց այդ համակրելի որոշումը Գանձակի
պէս մի տեղում, ուր մեր բուրժուազիայի յա-
ւիտենական կուռքին, էգոիզմին ու կաշուե-
պաշտութեան, դաւաճանիւր, զրպանի նուիրա-
կան շահերին անտարբերութիւն ցոյց տալու եօ-
թը մահացու մեղքերից առաջինն է համար-
վում, աւելի աչքի է ընկնում ու մի եւ նոյն
ժամանակ յոյսի նշաններ տալիս, որ մեր ունե-
ւորները, յանուն հասարակական գործի, կարող
են երբեմն անհաւատարիմ գտնվել դէպի իրանց

վերանորոգել այն աւերակները, որ աջ ու ձախ
փռում էին արեւելքից, հարաւից եւ արեւմուտ-
քից արշաւողները: Բայց հայոց ազգի դժբախ-
տութիւնը դեռ առջեւն է: Եւ ոչ մի տի-
րապետութիւն նրա համար այնքան աղետալի
չէր, ինչպէս այն, որ զայիս էր արեւելքից:

XI դարից արեւմտեան Ասիա եւ սկսում
թափվել Միջին Ասիայի խառնաճաղանձ, վայ-
րենի ազդերը: Դրանք մահ եւ ոչնչացում են
բերում Հայաստանի համար: Սկսվում է ամե-
նապետութիւն արեւելքի թափվել մի երկար
շրջան: Թաթարական զանազան ցեղեր, հեղին
հոսանքների նման, տարածվում են արեւելքից
դէպի արեւմուտք, այրում, սպառում են ազ-
գերի կեանքը: Տուրքիւր-բէկ, Ալի-Ասլան, Չին-
դիլ խան—սրանք երկնային պատիժներ են
Հայաստանի համար: Վերջին, ամենաառնչի
պատիժ Լէվան-Թեմուրը արեւան ծովերի մէջ
խեղդում է բոլոր երկրները, բայց ամենից
շատ եւ ամենից անգութ կերպով—հայոց եր-
կիրը:

Աւելի աղետալի դրութիւն չէր տեսել նոյն
խալ Հայաստան, Կոտորածներին հետեւեցին
ժամատախտ ու սովը: Լափառարած, մութ գե-
րեղմանատուն էր դարձել հայի դժբախտ հայ-
րենիքը: Պաւար տիրեց եւ մոգերի վրա, աղ-
գարակութեան այն մասերը, որոնք ազատվել
էին սրի բերանից, մասնակցին զարհուրելի

սիրահար գրպանը: Իրանց նուիրատուութեամբ եղբ. Մալխասեանները ցոյց տուին մեր ունեւորներին, որ մարդ, իր շատ ունեցածից շատ տալով անգամ որ եւ է հանրօգուտ գործի, չի քանդվի, քայքայվի ու անանկանայ, այլ կը ստանայ ընդհակառակը մի շատ լաւ վարձատրութիւն, մի թանգագին բան, որի անունն է բարոյական միութեամբութիւն, եթէ, ի հարկէ, այդպիսի միութեամբութեան քաղցրութիւնը զգալու ընդունակութիւնը նա չի թաղել իսպառ: Սովորաբար այդ բանին շատ շատերը անընդունակ են լինում, որոնք արհամարելով բարոյականը ու նոյն իսկ թքելով նրա վրա, փնտռում ու աղոթութեամբ գտնում են միշտ ամենաէականը այս անշարժ կենսութեամբ—կոպիտ զգայնական գուարճութիւնն ու միութեամբութիւնը... Հասարակական գործը, յանուն ընդհանրական շահերի արած զոհաբերութիւնները մինչեւ օրս մեզանում զեռ ոչ ոքի չեն քանդել ու քայքայել:

Ստ. Տէր Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԱՍԿՐՈՒԹԵԱՆ

Շուշի, մարտի 4-ին

«Մշակի» № 44-ում «Արցախցի» ստորագրութեամբ Շուշուց գրված թղթակցութեան մասին երկու խոսք:

Անա մտաւորապէս չորս ամիս է, ինչ ես գտնվում եմ Շուշու: Այդ ժամանակի ընթացքում ինձ համար թերեւ զէմ դուրս եկան զանազան յօդուածներ տեղական մի քանի թերթերում, բայց ինձ դէմ գրուածները չարքում, պիտի խոտորվածվի, որ Արցախցի արժանի է ոսկէ մեդալի, որովհետեւ նա իմացել է սուտի հետ յարմարեցնել մի զգուշիկ զրպարտութիւն էլ, որը ինձ անթիւ տուեց այս յօդուածը գրելու:

Ես մտադիր չեմ Արցախցու բոլոր գրածներին պատասխանել, որովհետեւ նա ինքը իրան է հակասում արդէ. մի տեղ նա ինձ «Ֆայլի» է անուանում, բայց մի քանի տող ներքեւ ասում է, որ ես փող եմ վեր առնում հիւանդներին բժշկելուց յետոյ, որով իմ չուրջը գրաւած եմ հիւանդների լէզէս... Եթէ ես «Ֆայլի» լինէի, նախ պիտի փող առնէի եւ նրա փոխարէն հիւանդին ոչինչ չը տայի. ապա որ ես «Ֆայլի» չեմ, ուրեմն ինչն է ինձ ստիպում իմ չուրջ հաւաքել հիւանդների լէզէս. ասել է՝ այստեղ կայ մի բան: Նա ասում է, որ ես ոչ ոքին չեմ բժշկած. մի առ մի թելել իմ Շուշու բժշկած հիւանդների անունները նախ լրագրական սինեանները չեն ների, երկրորդ՝ ամեն առողջացած հիւանդ չի ցանկանայ, որ իր մասին գրվի թերթում. բայց ես էլի մի քանիսի անունը անա տալիս եմ.—Անդրէաս Ասրեանի դուստրը՝ ներքին ծանր հիւանդութիւնից, Թարթարցի ուսումնասիրող Արարամեանին՝ խրոնիկական գլխացաւից եւ քնեւածութիւնից, Խաչեանց Դաւիթը՝ խլութիւնից, Զարիկեար Յակոբեանին՝ աչքի ծանր վերքի (շատ) հիւանդութիւնից, աւելի քան քսան մարդկանց՝ խրոնիկական փորկապութիւնից եւ ատամնացաւից, մի տիկնոջ՝ Neuralgia հիւանդութիւնից եւ այլն: Այժմ էլ ունեն ձեռքիս զանազան տեսակ հիւանդներ՝ շղային հիւանդներ, անդամալոյծներ, աչքի հիւանդներ, բնականաբար տառապողներ, ուղեւորացիներ եւ այլն, որոնք բոլորն էլ օրէջ օր զէպի լաւն են գտնում իմ ասածները, եթէ հարկ լինի, իմ հիւանդները կարող են հաստատել:

Ճիշդ է, որ ես հիւանդներին դեղ չեմ տալիս եւ ինքս էլ medicine doctor չեմ, ես բը-

ժշկում եմ հիպոսթիզով եւ մաքնեւորով, թէպէտ առաջինով դեռ Շուշու ոչ ոքին չեմ ենթարկած բժշկութեան. այստեղ ես առ այժմ բժշկում եմ իմ հիւանդներին միայն մաքնեւորով, այսինքն իմ կենդանական մաքնեւորով (իմ մատնեւորով, իմ շուշուով, մաքնեւորացած ջրով, չորով եւ այլն): Ինձ շատ հասկանալի է, ինչպէս Ամերիկայում եւ Եւրոպայում գտնվել են մարդիկ, որ իրանց խելքից վեր գտնելով այսպիսի բժշկութիւնը, յայտնել են հակառակ կարծիքներ, եւ չի էլ կարելի մեղադրել, քանի որ մարդիկ սովորած են միայն դեղերով բժշկվել, իսկ երբ լսում են, որ կարելի է բժշկվել առանց դեղերի, բնութեան տուած ոյժերով, դա նրանց համար խորթ է թւում, որով այդպիսիներին անուանում են չաղախներ, ֆալսի, հիպոկրատ եւ այլն: Ժամանակը այդ բոլորը ցոյց կը տայ. առանց ասում է՝ եւթ վերջը կը ծիծաղի, կուշտ կը ծիծաղի: Ես յոյս ունեմ, որ կարճ ժամանակից յետոյ ոչ միայն Արցախցին, այլ եւ մի քանի ուրիշ անձեր էլ պիտի ամաչեն իրանց՝ ինձ դէմ բռնած թշնամական արարմունքից...

Ասացի, որ աւելի լուսաւոր երկրներում անգամ գտնվել են մարդիկ, որ ընդգիմացել են մաքնեւորի բժշկութեան եւ ներշնչական բժշկութեան, բայց նրանք երբեք իրանց թող չեն տուած, պ. Արցախցու նման, սուտեր յօդները այդ գիտութեամբ պարագոյնների դէմ (ի հարկէ անդեալ բարբարոս դարերում այս գիտութեամբ պարագոյններին ինկվիզիցիայի էլ են ենթարկել, խոսքը դրա մասին չէ):

Արցախցին գրում է իր յօդուածում, թէ իրը զեռ այս օրերս մի թոքախտաւոր հիւանդ ծերունու ստիպել եմ անդունդից վեր կենալ եւ ինձ հետ սենեակում վազել, եւ խղճը հետեւալ օրը թողել է այս աշխարհը: Արցախցին ուզում է ասել, թէ ես սպանել եմ այդ ծերունուն: Երեւի, Արցախցին այդ տողերը գրելու ժամանակ չէ մտածել, թէ ինքը իր գրածին պատասխանատու է: Ես յայտնում եմ, որ իմ ձեռքում թոքախտաւոր հիւանդ չունեմ եւ այդպիսի դէպք ինձ հետ չէ պատահել. եթէ Արցախցին քաջութիւն ունի՝ թող յակնէ անուանէ հաստատէ փաստը կամ իր գրածը հերքէ...

Մաքնեւորի-բժիշկ եւ հիպոսթիզ
Թարթարցի Շէքերջեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան բժիշկներին համաժողովի ծրագրին եւ կանոնադրութեանը արդէն մշակված են եւ ուղարկվում են զանազան քաղաքներ՝ առանձին հրաւիրագրերի հետ միասին, որոնցով Կովկասի բոլոր բժիշկները հրաւիրվում են մասնակցելու առաջիկայ համաժողովին:

Հետաւոր Արեւելքում տեղի ունեցած բարդութիւնները, որոնք նշանաւոր չափով ծախք պահանջեցին Ռուսաստանից, արգելք դարձան պետական բնակարանային հարկը յանձնելու քաղաքներին: Այժմ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, կառավարութիւնը հնարաւոր է գտնում այդ հարկը տալ քաղաքներին 1902 թվականի յուլիսի 1-ին: Մինչ այդ ժամանակ ներքին գործերի մինիստրութիւնը, արդարադատութեան մինիստրութեան հետ միասին, կը մշակէ այն հիմունքները, որոնց համաձայն պէտք է տեղի ունենայ հարկի յանձնումը. մինչ այդ ժամանակ կը պարզվին նոյնպէս այդ հարկը վճարողների իրաւունքները եւ

ներ. դրանք վանական դպրոցներ են, հաւաքում են իրանց մէջ աշակերտներ, գրագիտութիւն են սովորեցնում: Այդ դպրոցներից դուրս են գալիս արժանաւոր հոգեւորականներ, որոնք աշխատում են կենդանացնել մեռած գրականութիւնը, վերանորոգել աւերակները: Ձէ անցնում եւ կէս դար, Հայաստանի արեւելեան մասերում արդէն բաւական զգալի են դառնում վայրենութեան խաւարի դէմ ուղղած ջանքերը: Այդտեղից մարդիկ են գտնում Արեւմտեան Եւրոպայ, ուր ծաղկեցնում են հայերէն գրքերի տպագրութիւնը: Դարի վերջում այնքան զգալի է նահատակ ազգի մասաւոր վերածնութիւնը, որ նոյն իսկ առաջ է գալիս քաղաքական ազատութեան ձգտումը. Իսրայիլ Օրին Հայաստանի արեւելեան մասում ծրագրում է ապստամբական շարժում պարսիկների դէմ: Դա առաջին հայ քաղաքագէտն էր, որ ստեղծեց եւ եւրոպական մի քանի պետութիւնների առջեւ հանեց հայոց հարցը:

Լուսաւոր XVIII դարը, որ այնքան նշանաւոր է մարդկային առաջադիմութեան պատմութեան մէջ: Ասիայի մի անծանօթ լեռնաստանում, մահմեդական բարբարոսութիւնների մէջ խելզված հայկական կենսքն էլ, թէեւ շատ ծանր ու դանդաղ, նոյնպէս առաջ է գնում: Իսրայիլ Օրին Եւրոպայում է, աշխատում է համաձայնութիւն կայացնել ռուսաց կառավարու-

մասնակցութեան չափը քաղաքային ինքնավարութեան գործերում:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, Անդրկասպեան եւ Անդրկովկասեան երկրների մահմեդական ազգաբնակչութեան մէջ դպրոցական գործը կարգաւորելու նպատակով, մշակում է մի նոր կանոնադրութիւն գիւղական դպրոցների վերաբերմամբ:

Ֆինանսների մինիստրութիւնը, իրբեւ վարձատրութիւն այն ծախքերի, որ նա անում է Փոթիի նաւահանգիստը կարգի բերելու համար, պետական խորհրդի մէջ հարց է բարձրացրել ժամանակաւորապէս 1/2 կօպէկ լրացուցիչ տուրք նշանակելու մասին Փոթիի նաւահանգիստում ուղարկվելիք եւ ստացվելիք ապրանքների իւրաքանչիւր պուլից: Փոթիի նաւահանգիստի վրա անելու ծախքերի ընդհանուր գումարը հասնում է 2,900,000 ռուբլու:

Մեզ խնդրում են յայտնել, որ Թիֆլիսի բնակչուհի Վարդուհի Սարգսեան, իր բազմամեա ընտանիքով, խիստ չքաւոր դրութեան մէջ է եւ կարօտ է բարեկործանների օգնութեան: Վարդուհի Սարգսեան ապրում է Բեթլեհէմի եկեղեցու գաւթում:

«Թիֆլիսի արտիստական ընկերութիւնը», ինչպէս հաղորդում է «Новое Обозрение» լրագիրը, վճռել է այս տարվայ սեպտեմբեր ամսից իր թատրոնը տալ որ եւ է անտարբէնորի այն պայմանով, որ նա խումբ կազմէ նշանաւոր դերասաններից եւ չաքանակական չորս անգամ գրամատիքական ներկայացումներ տալ: Ընկերութիւնը, ըստ երեւոյթի, կանգ է առել անտարբէնոր Ստոյսկու վրա, որ մօտ օրերում պէտք է գալ Թիֆլիս եւ ներկայացնէ ընկերութեանը իր գրաւակները:

Մի քանի լրագիրների հաղորդած տեղեկութիւններով վերջին տիւրած ժամանակ 200,000 ռուբլին տարել է մի գիւղացի, առեւտրական Տրոֆիմով, իսկ 75,000 ռուբլին՝ երգուեալ հաւատարմատարի օգնական Րաքիսկի: Երկուսն էլ ապրում են Պետերբուրգում:

ՇՈՒՐՔԻՆԵՂԻ ԳԻՐԵՂԵ (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Այս տարի այստեղ եղան մի քանի վիժելու դէպքեր եւ վերջացան ծննդականների մահով, ուստի յղի կանայք սարսափի մէջ են: Ձր կայ բժշկական օգնութիւն: Մանկաբարձուհիներին փոխարինում են գիւղական տգէտ տատներնրը: Ձր նայած, որ Շուշուքէնց գիւղը գտնվում է Շուշի քաղաքից ընդամենը 3-4 վերստ հեռավորութեան վրա, եւ գիւղացիները կարող են օրական 4-5 անգամ գնալ այնտեղ ու գալ, բայց նրանք, դժբաղդաբար, չեն դիմում այնտեղի մանկաբարձուհիներին (որքան գիտենք՝ այնտեղ կայ երկու մանկաբարձուհի, այդ գիտեն եւ իրանք գիւղացիները): Ոչ թէ միայն չքաւոր գիւղացիներ չեն դիմում բժշկական օգնութեան, այլ եւ ունեւորները: Թէ առաջինները եւ թէ երկրորդները հիւանդութիւնների ժամանակ նախապատիւ են համարում գիմել ինքնուրոյ-

թեան, Աւստրիայի, Հոսմի պապի եւ Պֆալցի իշխանի հետ՝ մի զօրաբաժնի ստանալու եւ նրա օգնութեամբ Հայաստանի պարսկական ժամանակ ազատելու համար: Օրբի հետ է Միւնստ վարդապետը: Սա արդէն երկրորդ հայ քաղաքագէտն է:

Մի եւ նոյն ժամանակ Միսիթար Սեւաստացին անցնում է Եւրոպա՝ մի վանական ընկերութեան հաստատուելու եւ գրական մեծ շարժում սկսելու համար: Այդ ժամանակից դեռ բերը բաժանվում են Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան մասերի մէջ: Արեւմտեան մասում ազատութեան գաղափար չունի. նա գլը խաւորապէս դրական գործունէութեան է նրւերվում: Իսկ արեւելեան մասի, այսինքն պարսկական Հայաստանի համար ամենազգայաւոր, առաջնակարգ գաղափարը դառնում է մահմեդական լուծը թօթափելը:

Իսրայիլ Օրին երկար կենսք չունեցաւ, որպէս իր կարողանայ իր ծրագրերի գոնէ մի մասը զիջագործել: Բայց նրա սկսած գործը չը մոռացվեց եւ սուրբ աւանդի պէս պահվեց արեւելեան Հայաստանի մէջ: 1722 թվականին ռուսաց Պետրոս Մեծ կայսրը արշաւանք սկսեց դէպի Անդրկովկաս: Քրիստոնեաների վաղմի յոյսերը իրականանալու վրա էին: Պետրոս լաւաբերութիւններ ունէր հայերի հետ. Օրբից

բժիշկներին, տգէտ տատմէներին ու Վոդոմանի» գրքի տակն ու զլուխը իմացող գրեացներին, որոնց բժշկելու ամենակարող միջոցը «սեւ հաւի» արեւն է ու յիշեալ գիրքը...

ԼԱՆԴՈՒԴԻՆԵՑ մեզ գրում են. «Մարտի 4-ին, կիրակի, տեղիս զօրաբաժնի հայ զինուորները ս. հաղորդութիւն ընդունեցին եւ որովհետեւ զինուորական քահանայ Սամուէլեանցը հիւանդութեան պատճառով Թիֆլիսից չը կարողացաւ գալ, այդ պատճառով, գնդապետի պաշտօնական գրութեան համաձայն, նրանց հաղորդեց Բաղրատ քահ. Սուքիասեանցը: Շնորհիւ տէր հօր եռանդուն աշխատանքի՝ նոյն օրը տեղիս հայ հասարակութիւնը եկեղեցու գաւթում ծաշ տուեց 100 հոգուց բաղկացած հայ զինուորներին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅԲԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, մարտի 4-ին

Ֆրանսական մամուլը կը շարունակէ զբաղվել օր. Վէրա Ժիլի հարցով: Ռուս ուսանողուհին մինչեւ այսօր բանն է տակաւին իրեն դէմ ոչ մէկ կողմէ բողոք կայ. ոչ պ. Դէշանէլ՝ որուն վրա կատարված էր սպանութեան փորձը եւ ոչ օր. Ջէլէնինա դատ չեն ուղած բանալ: Ընհրակառակ, այս վերջինը քանիցս ինքրած ու ցանկութիւն յատնած է, որպէս զի իր ընկերուհին ազատ արձակվի: Բայց դատարանը՝ չեն դիտար լին անհաւակնալի չարժանիքէ մղված՝ կը պահէ զայն կըղպանքի տակ:

Օր. Վէրա Ժիլի փաստաբանը՝ պ. Սալմոն հարցաքննիչ դատաւորին խնդրագիր մատուցած էր իր յաճախորդին առժամայ արձակումի համար: Դատաւորը մերժած էր սակայն, զոհացում տալ պ. Սալմոնի:

Օր. Ջէլէնինա եւ օր. Վէրա Ժիլո մէկ մէկ նամակ ուղղեցին ամբաստանիչ առեւանդին մի եւ նոյն նպատակի համար:

Ահաւասիկ այդ սրտայոյզ նամակները: «Պարոններ,

«Հազիւ թէ կրնամ գրել. ներողամիտ եղէք: Անգամ մըն ալ կը պաղատեմ ձեզ, որպէս զի բարեկամուհիս ինձի դարձնէք: Այս քնործ ինձի մերժելը չարաբարանքներս աւելի ծանրացնել պիտի ըլլար ու դուք այդ անգթութիւնը չը պիտի գործէք:

«Իմ խորունկ յարգանքներս,

«Ալէքսանդրին Ջէլէնինա»

«Պարոններ, «Մի կարճէք, որ հարցաքննիչ պ. դատաւորին որոշման դէմ բողոքելու դիտաւորութիւն ունիմ: Գիտեմ որ իրաւունքին համաձայն է անիկա:

«Ինչպէս խնդրագրիս մէջ յայտնած էի, եթէ այս քնործ կը խնդրեմ, ոչ թէ ինձի՝ այլ իմ խեղճ բարեկամուհիս համար է:

«Ձեզի կը կրկնեմ, թէ անիկա Պարիզի մէջ կը գտնվի առանց ընտանիքի, առանց բարեկամի: «Գիտեմ միւս կողմէ, որ իր օրերը թերեւս հաշւած են: Եթէ այնքան իրաւացիօրէն իր ներշնչած գթութիւնը ձեզ համոզել չը բաւէր,

յետոյ Գանձասարի կաթողիկոսներն էին ձեռք առել հայերի ազատութեան գործը. պայմանաւորված էր, որ ռուսաց զօրքերի հետ միաս ժամանակ պատերազմական գործութիւններ պիտի սկսեին պարսիկների դէմ նաեւ հայերը: Եւ անա նոյն այն թւականին Դաւիթ-Բէկը ապստամբութիւն է յարուցանում Սիւնիքի մէջ, սկսում է զարմանալի յաղթութիւններ տանել թշնամու դէմ:

Բայց Պետրոս Մեծը հարկաւորված էր չլուս հեռանալ կասպից ծովի ափերից: Այնուամենայնիւ, ազատական շարժումը չէ դադարում հայերի մէջ: Մահը վերջ է դնում Դաւիթ-Բէկի արգիւնաւոր կենսքին. համարեա ամբողջովին ազատված Սիւնիքը նորից ընկնում է մահմեդական լուծի տակ: Բայց շարժումը անցնում է Սիւնիքի հարեւան Դարբաղը, րոնկում է նրա հակապական լինելը: Այստեղ ալ եւս կարճատեւ, երբեմն չէր ազատութեան գործը: Մի սաստիկ յամառութեամբ նա պահվեց մինչեւ XIX դարի սկիզբը. հայ մէլիքները, չը նայած արտաքին անպատու հանգամանքներին եւ ներքին անհամաձայնութիւններին, մի ամբողջ դար անչլք պահեցին ազատութեան հուրը, որ նրանց մէջ վառել էր Օրբին:

(Կը շարունակվի)

իր արարքին զիւցազնութիւնը ձեզ պիտի արգելէ զիս իր անարին մօտ տեսնելու վերջին միջոցառումները մերժելու իրեն:

«Կր կարծէք որ հատուցումը մը իրաւունք ունի ան: Պէտք է թող տաք ուրիշն ինձի օժանդակ լինել իր տրտում վայրկեաններուն:

«Պատուոյ վրա, առանց ո եւ է վարանումը, կերպով ձեռքը որ՝ ոչ մէկ կերպով փախուստ չը պիտի տամ արդարադատութեան առջեւ եւ ոչ հանդիսաւոր խոստում կուտամ դատավարութեան ամեն գործողութեանց ներկայ գտնուիլ:

«Յուսարով որ իմ արդար խնդրանքս ընդունելով արժանիք պիտի տնօրինէք, կը խնդրեմ, որ ընդունէք իմ խորունկ յարգանքներու հետ շատ բարձր համարումիս արտայայտութիւնը:

Վէրա Ժիլօ

Ամբաստանիչ ատենանք այս երկու շաբաթը խնդրագիրներու մասին վճիռ չէ կայացուցած տակաւին: Օր. Վէրա Ժիլօյի մտային զիջումը քննելու պատճառ ունեցող բժիշկներու տեղեկագրին սպասելու պատճառով իր վճիռը կը յետաձգէ ու կը յետաձգէ: Վաղը սակայն վերջին օրն է, երբ դատաւորները պէտք է վերջապէս որոշում մը տան:

Հարցաքննիչ դատաւորը շատոնց աւարտած է իր քննութիւնները ու դատարանին ուրիշ բան չի մնար ընել՝ բաց եթէ կամ օր. Ժիլօն ազատ արձակել եւ կամ առանց յապաղումի դատաւոր տեսնել: Բայց ֆրանսական արդարութիւնը ոչ մէկը կընէ եւ ոչ միւսը: Եթէ պ. Դէշանէլ իրաւունքն անմիջ է, արդարութեան պաշտօնական բարեխղճները իրենց այս ընթացքով պ. Դէշանէլը ձերբակալէ անբժիշկ ցուցնելէ շատ հետո եւ ու կերպով մը կը հաստատեն «Aurore»-ի սա տեղեկութիւնները:

«Այսօր 42 օր է, որ օր. Վէրա Ժիլօ բանտարկուած է: Վեց շաբաթուան կանխարգել (p: éventive) բանտարկութիւն յայտնի, խոստովանուած ու անվիճելի իրողութիւններու համար, որոնց քննութիւնը 48 ժամուան մէջ կարելի էր կատարել. առկա անբնական ու դարձելու բան մըն է:

«Բայց ինչ որ աւելի անբնական ու աւելի դարձել է՝ այս կանխարգելումը ոչ մէկ կերպով արդարութեան գործին չը պիտի սատարէ: Օր. Վէրա Ժիլօ երբեք չը պիտի դատուի: Երբեք իրեն թող չը պիտի տրուի՝ ինքզինքն արդարացնել, պաշտպանել ու դատարանի մը առջեւ իր արարքի չարժանիքները բարձրաձայն յայտարարել: Ապօրին բանտարկութեան մը այս երկար շաբաթները միակ նպատակ մը ունին. խնդրել խնդրել ու պատրաստել զգուշանալի տակաւին» (1) լուծուած մը, որուն վրա քանի մը անգամ խօսած ենք արդէն:

«Կայտնի թիւնը այն աստիճան հրէշային է, որ օր. Վ. Ժիլօն ազատելու միակ միջոցը՝ օր. Զէլէնիայի կողմէ՝ իրեն դէմ ուղղուած կանոնաւոր բողոք բարձուելը կը թիւի ըլլալ այսօր: Այս բողոքը միայն պիտի հարկադրէր արդարութիւնը շարժել իր դատուած տեղէն ու այսպիսով խնդրել պիտի լուսաբանուէր, արձակ համարձակ, եղենադատ ատենանին առջեւ: Ո՞վ գիտէ ան ատեն ի՞նչ պիտի իմանայինք: Շատ հետաքրքրական բաներ՝ քանի որ կարելի կընեն զանոնք միջոցէ ծածկելու համար:

«Օր. Վէրա Ժիլօն պէտք է դատուի եւ կամ ազատ արձակուի անմիջապէս: Ուրիշ ո եւ է լուծում՝ ոճիր մ'է եւ խոստովանութիւն մը պիտի ըլլար:

Հանրային կարծիքը՝ ի նպաստ երկու ուսուցիչական ուսանողներուն յուզելու համար՝ «Aurore»-ի գլխաւոր խմբագիրներէն մէկը՝ պ. Իւլիէն Գոսիէ վաղը իրենց լուսնային քննութիւնը մը պիտի ընէ միջոցով մը մէջ, Մօն Մարտի: Անոր նկարագրութիւնը՝ յաջորդ համակով: Տիգրան

ՆԱՄԱԿ ԲՈՂՔԱՐԻՆՆԵՐ

Վառնա, փետրվարի 18-ին

Ամառ 5-ին, վարդանանց տօնի օրը, տեղի ունեցաւ Վառնայի ազգային երկու սեռի վարձարաններու խորհուրդի 18-ին նիստը:

Որպէս թէ՛ խաղաղութեան ու դաշնակցական լայնութիւններու առջին արձանագրութիւնը, ինչպէս լիակշիւ փակելու համար՝ Վեշնիլ ընտանիքը խնդրած ըլլալ ֆրանսական կառավարութիւնէն, որպէս զի այս վերջինը զինուած ընէ ռուս կառավարութեան՝ օր. Վէրա Ժիլօյի հարկերը վերադարձուելու մասին լուսնային դատարանի վրա: Վէրա Ժիլօն ռուսական դատարանով, ամեն խնդրի նկատի փակվիլ: Բայց մենք կը կարծենք թէ՛ ռուս կառավարութեան հանրաժանօր արդարադատութիւնը չը պիտի ընդունի երբեք պապի լուծում մը:

Վարանների օգտին մէկ ընտանեկան պարահանդէս, զիմականոր եւ անդիմակ: Երեկոյեան կատարեալապէս աղողկեց, մանաւանդ նիւթաւոր (410 րուրի) զուտ արգիւնք, մի գուժար, որից աւելի սպասելու անկարելի էր Վառնայի մէջ: Հասցիներ իր մաքուր մօտ: մին հասաւ: շնորհիւ մի քանի օրերուց ներքին հոսանքներ աշակերտութեանը՝ տոնակներ ծախելու գործին մէջ եւ շնորհիւ կազմակերպողների գովելի խնայողութեան: Հետաքրքրական այն էր, որ իսկապէս մէկ որոշ կազմակերպող յանձնարումը չը կար եւ բազմաթիւ անձեր՝ վաճառականներից սկսած մինչեւ հասարակ մշակները՝ ամենքն էլ իրանց ձեռքովն եկած անուս էին ազգային երեկոյեան համար, «մեր դպրոցներին» համար:

Պարահանդէսը տեղի ունեցաւ Պ. Մանուկեանի այժմ անվարձ միայն զեղեցիկ շէնքի մէջ, որ անփականաւոր ձրիաբար դրեց հոգաբարձութեան տրամադրութեան տակ: Գաղափարային վարկութիւնը փոխ տուեց բազմաթիւ զբոսայիտներ եւ ոսկեզօծ դարձրեց արանի համար: պէտք եղած կանխարանները՝ ջահեր, հայելիներ, պատկերներ, գորգեր, աթոռներ եւ այլն ժողովիցին զանազան ազգայինների աներից, խանութներից, արձարաններից: Զինուորական երաժշտական խումբը ձրիաբար ամեն, հրամանատարի թոյլտւութիւնով (վերջը զինուորականի կէս գին նուրբից) Պարահանդէսը շատ ուրախ ու կենդանի անցաւ եւ տեւեց մինչեւ ատուածովայ ժամի 6 ու կեսը: Դիմակաւորներից երկու ամենաաղօղներին մէկ-մէկ նուէր տրվեց՝ մէկ-մէկ զեղեցիկ ասեղնագործ բարձի բերեա, որ պատրաստել էին օրիորդաց վարժարանի աշակերտներէն:

Գրեթէ ամեն տարի Վառնայի մէջ մէկ-երկու պարահանդէս կամ թատերական ներկայացում են տրվում տեղական ազգային վարժարանների օգտին: Այդ արտակարգ եկամուտի շնորհիւ է, որ մի կերպ մեր դպրոցների բիւջետը ծայրը ծայրին է հասցնւում: Զը նախ, որ Վառնայի մէջ բազմաթիւ հայեր կան, թէ վերջին տարիներս գաղթածներ եւ թէ բնիկ «տեղացի» կուլիաներ, քաղաքիս հայոց վարժարանները գրեթէ խեղճուկ վիճակի մէջ են գտնւում: Այս ձմեռ դպրոցները մի քանի օր նոյն իսկ փակ մնացին իր վառելիքային չուսնալու պատճառով: Հոգաբարձութիւնը, նիւթական միջոցների պակասութիւնից ստիպված, ներկայ ուսումնական տարեշրջանի սկզբին մերժեց վարժարան ընդունել աղքատ աշակերտների մէկ մասը: Ուսուցիչների ուսմանը հասցնված են ծայրայեղ մի քանի միւս մի եւ այն էլ անկանոն են վճարվում: Այսպիսի նիւթական պայմանների մէջ բնականաբար ուսուցչական խումբը շատ էլ աղողակ կերպով չէր կարող ընտրված լինել: Անշուշտ դատաւորներ իր թեւում կան արժանատի անհատներ, բայց ամբողջութիւնը անբաւարար է...

Զաւալի է տեսնել Վառնայի պէս բազմահայ քաղաքի մէջ մի դպրոց, որ հաղիւ 4 դասարան ունի (բացի մանկապարտեզից եւ նախապատրաստականից) եւ այն էլ այդ աստիճան անդադադունցի վիճակի մէջ: Սակայն Վառնայի իր հայ ազգայնականութիւնով, իր աշխարհագրական դիրքով եւ երկրի քաղաքական պայմանների շնորհիւ պէտք էր իսկապէս ազգային ուսումնական կենտրոնի դեր կատարեր արտասահմանի հայ գաղութներին համար: Այդ գաղութների մանուկները, իրանց ծխական զբոսայիտները աւարտելուց յետոյ, մնում են ընդհանրապէս չուսարած, որովհետեւ իրանց ուսումնաւորութիւնը շարունակելու համար անպարէզ չեն գտնում Մի քանի տարի հայկական դպրոցի մէջ անցկացնելուց յետոյ, ներքեւ մեծ գոտարարութիւններ են հանդիպում տեղական պետական գիմնազիաները մտնելու համար եւ ճարահատու, հաղիւ գրել կարգաւ սովորած, վաղորօք զանազան արհեստաւորների մօտ են մտնում իրեն աշակերտ եւ մի քանի տարի ապարդիւն կորցնում ու բթանում «չիրար» վիճակի մէջ: Ոմանք էլ կրօնամօլ «Ֆրերներ» դպրոցներն են սկսում այցելել, ուր, բացի մէկ-երկու եւրօպական լեզուներից, ոչ մէկ լուրջ բան չեն սովորում եւ թերեւս երեսնների փափուկ ուղեղները նախապաշարմունքներով լցվում:

Արտասահմանի հայութիւնը անհրաժեշտ պէտք ունի մի միջնակարգ դպրոցի, որպէս զի արհեստների համար պատրաստվող մանուկները, բացի ընդհանուր կրթութիւնից, բնագիտական եւ մաթեմատիկական նախապատրաստութիւն ստանային արժէքաւոր արհեստաւոր լինելու համար, իսկ եթէ այդպիսի միջնակարգ դպրոցին կցվէին երկու տարվայ

յատուկ վաճառականական կուրսեր, այն ժամանակ լուրջ նախապատրաստութիւն կը զբոսնէին նաեւ այն բազմաթիւ հայ երիտասարդները, որոնք վաճառականութեան պիտի նուիրեն իրանց: Այն ժամանակ հայ վաճառականութեանը իրենց արդիւնքը ստանալու ժողովուրդների աչքում:

Արտասահմանի հայ գաղութները միայն այդ երկու ասպարէզներն ունեն իրանց առջեւ եւ այդ երկու ասպարէզների վրա հաստատ գիրքը բռնելու համար նրանք անհրաժեշտ պէտք ունեն այդօրինակ մի կրթական հաստատութեան:

Եթէ այդպիսի մի հիմնարկութեան ձեւնարկվի՝ Վառնայի ամենապարզ վայրն է ներկայացնում իր մօտ եւ մշտական հաղորդակցութիւնով Ռոմիայի, Բուլղարիայի զանազան հայաբնակ քաղաքների, Եգիպտոսի եւ նոյն իսկ Կովկասի եւ Կ. Պօլսի հետ, իր կեանքի էականութեամբ եւ վերջապէս ընդհանուր քաղաքական պայմաններով: Բուլղարական կառավարութիւնը ոչ միայն ազատ կը ձգէ այդպիսի մի ազգային հիմնարկութեան կազմակերպութիւնը ու դարձապէս իրենց զանազան կարգերի չընդհանուր, այլ եւ, ի հարկին, եթէ դպրոցը լուրջ դիրք ունենայ, հնարաւոր կը լինի պաշտօնագէտ հասարակեցնել տեղական միջնակարգ դպրոցներին եւ այդպիսով աւարտողների առաջ կը բացվեն նոյն իսկ եւրօպական համալսարանների դռները: Վերոյիշելով պայմանների եւ մանաւանդ բուլղարական կարգերի չընդհանուր, Վառնայի մէջ հիմնված մէկ լուրջ միջնակարգ դպրոց մեծ նշանակութիւն կարող է ունենալ ոչ միայն արտասահմանի հայերի համար, այլ եւ համայն հայութեան համար:

Բայց ո՞վ պիտի ձեռնարկէ այդպիսի մի գործի եւ ի՞նչ միջոցներ պէտք են այդ գաղափարը իրագործելու համար:

Երկրորդ հարցին պատասխանելու աւելի դիւրին է, քան թէ առաջինին: Վառնայի բուլղարական պետական գիմնազիան, որ 2 բաժանմունք ունի՝ կախարհական եւ ռեալական, եւ բաղկացած է 20 դասարաններից, տարեկան 93 հազար արծաթ ֆրանկի բիւջետ ունի եւ բոլոր դասատուները, գրեթէ առանց բացառութեան, համալսարանական բարձրագոյն կրթութիւն ունեն: Հետեւաբար մէկ միջնակարգ դպրոց պահելու համար վառնայի մէջ, բաղկացած 9 դասարաններից (7 գիմնազիական եւ 2 վաճառականական) պէտք կը լինի ամենաշատը 45 հազար ֆրանկ: Ենթադրելով, որ ունենու աշակերտների դասավանդից գոյանայ տարեկան 5 հազար ֆրանկ, դպրոցը պէտք կունենայ 40 հազար ֆրանկ հաստատ եկամուտի, այսինքն տարեկան 15 հազար րուբլու: Ուրեմն 200 հազար րուբլուց բաղկացած մի գրամատուլիս կարող կը լինի ընդամիշտ ապահովելու այդպիսի մի դպրոցի գոյութիւնը, որը, չնայում եւ, մեծ նշանակութիւն կունենայ թէ արտասահմանի հայերի եւ թէ նոյն իսկ ընդհանուր հայութեան համար:

Բայց որտեղից գտնել այդպիսի մի դրամագլուխ: Այդ խնդրին թող պատասխանեն նախ թային արդիւնաբերութեան հայ թաղաւորները, զանազան բիրտների հայ իշխանները, որոնք եկեղեցիների կառուցանելու համար կամ աջակցութիւն տալիս են տասնեակ հազար րուբլիներ:

Անշուշտ նրանց առատաձեւութիւնը չի պակասի, երբ խնդիր կայ համայն ազգի համար գոյութեան մէկ տաճար կառուցանել:

ԲՅՈՒՆ. Ա. Ա. Ս. Ս. Ս. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՆԻՐ

—Հոսմից հաղորդում են ֆրանսիական լրագիրներին, թէ Պապը սպառնում է եկեղեցական բանադրանքի եւ անէժեքի ենթարկել այն բոլոր անձանց, որոնք ձայն կը տան յօգուտ ֆրանսիական պարլամենտում այժմ քննվող օրինագծի, որ ուղղված է կրօնական միաբանութիւնների դէմ:

—Լիւնէնայից «Morning Post» լրագրին հեռագրում են, որ Ռուսաստանը, ապստամբութեան հնարաւորութեան առաջն անհետ նպատակով Բալկանեան թերակղզու վրա, առաջարկում է պետութիւնների միասին պահանջել բալկանեան փոքրիկ պետութիւններից, Սերբիայից, Բուլղարիայից եւ Թունասիայից, որպէս զի նրանք կրճատեն իրանց գործերը, երաշխաւորել մի եւ նոյն ժամանակ նրանց անկախութիւնն եւ ապահովութիւնը: Այդպիսի ընթացքը ոչ միայն կապահովէր խաղաղութեան պահպանութիւնը Բալկանեան թերակղզու վրա, այլ բարեբար ազդեցութիւն կունենար եւ այն կողմից, որ հնարաւորութիւն կը տար այդ պետութիւններին կարգի բերել իրանց ֆինանս-

ները: Ասում են, որ Մեծ-Բրիտանիան եւ Աւստրիան արդէն միացան այդ առաջարկութեանը:

—«Memorial Diplomatique» լրագրի խօսքով, չէրնօգործական իշխանը տեղեկացրեց սերբիական կառավարութեանը, թէ ինքը մտադրութիւն չունի մասնակցելու այն ինտրիգներին, որոնք նպատակ ունեն ընդհարումներ առաջացնել Բալկանեան թերակղզու վրա: Մի եւ նոյն ժամանակ նա տեղեկացրեց ալբանական ազդեցութեանը, թէ ինքը մտադրութիւն չունի աշակցելու նրանց՝ սուլթանին դահլիճէ պահելու համար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՏ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

7 մարտի

Նիւ-ԵՐՈՒ: Հաղորդում են, թէ Մակ-Կիւլէյ առաջարկել է պետութիւններին որոշել այն գուժարը, որ Զինատանը կարող է վճարել եւ ապա որոշել այն մասը, որ պէտք է հանդիսանալ մի պետութեան:

ԼՕՆԴՕՆ: Համայնքների ժողովը Համալսում ասում է, թէ վիճելի հարցի լուծումը ուսման է անգլիացիների մէջ կը կատարվի զինուորական իշխանութիւնների միջոցով: Սաղաղութեան խանգարման երկիւղ չը կայ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 7-ին ֆինանսների մինիստրի խորհրդի դահլիճում բացվեց արադապատէրների վեցերորդ համառուական ժողովը, մինիստրի օգնական Կովալովսկու նախագահութեամբ: Առ այժմ եկել են 57 անդամներ: Կիւիվ: Դեկտեմբր բացվեց կիւիվի մօտ:

ԽՍՐՎՈՎ: Լեւոնիցիկու գործի պաշտպանը վճարելութեան զանգատ է տալիս:

ՄՕՍԿՎԱ: Այսօր տեղի ունեցաւ ժողովուրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլեւսկու թաղումը: Գերեզմանանոցի եկեղեցուց միջեւ գերեզմանը դադար տանում էին պրօֆեսորները եւ ուսումնական չրջանի աստիճանաւորները. դադարի գլխի կողմից բռնել էր Մեծ-Իշխան Սէրգէյ Ալեքսանդրովիչ:

8 մարտի

ԼՕՆԴՕՆ: Համայնքների ժողովը Զեմբերլէն յայտնում է, թէ Բոտա գրաւոր կերպով իմաց տուեց Կիտլեներին, որ ինքը պատրաստ է ներկայացնել իր կառավարութեան լուրջ քննութեանը այն պայմանները, որ Կիտլեներին յանձնված է առաջարկել նրան: Դրա հետ միասին Բոտա նկատում է, որ նրա կառավարութեանը եւ նրա բարձրաստիճան օֆիցերները համաձայն են նրա հայեացքներին: Այս գործին վերաբերող վաւերացումները կը ներկայացվեն պարլամենտին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագուհի Կայսրուհի Մարիա Յէօգորովնա մարտի 6-ին հասաւ Կոպէնհագէն: Թիֆլիսից եւ Սամարայից հաղորդում են, որ այդ քաղաքներում տեղի են ունեցել հոգեհանգիստների ժողովուրդական լուսաւորութեան հանդուրդեալ մինիստրի իշխանութիւն:

ՐՕՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Զիֆօի արտահանութեան գրասենեակում ծառայողներից մէկը, Սիմէոն Գրին, երէկ 25,000 րուբլի ստացաւ պետական բանկի բաժանմունքից եւ անյայտացաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ֆինլանդիայում գոյութիւն ունեցող պօստային կանոնները լրացնվում են հետեւեալ որոշումով: «Բաց նամակի բովանդակութիւնը չը պիտի պարունակէ իր մէջ որ եւ է բան, որ հակառակ լինէր օրէնքին, հասարակական կարգին, բարոյականութեան եւ վայելչութեան: Եթէ պօստային հիմնարկութիւնը գտնի անթոյլատրելի բովանդակութեամբ մի նամակ, այն ժամանակ նամակը չի հասցնվի տիրոջը:

Ալժիր: Գնեբրալ Սէրվիէր փետրվարի 25-ին գրաւեց Տալին օազիսը՝ տաք կուից յետոյ:

ԿԵՆՆ: Այն նկատողութեան մէջ, որ տպագրված է Լօնդօնի «Daily Mail» լրագրում, ասված է, թէ Անգլիայի քաղաքականութիւնը արեւելեան Ասիայում պէտք է հիմնվի ոչ թէ «բաց դռների» քաղաքականութեան վրա, այլ նոր սկզբունքի վրա, այն է Անգլիայի առաջնութեան սկզբունքի վրա: Եւսնցիլի հովտում:

«Keölnische Zeitung»-ում գեներալը է մի հեռագիր «Բաժանման երեւակայականութիւնը» վերնագրով, որի մէջ այս առիթով ասված է. «Այս բանը հերքելու համար բաւական է ցոյց տալ, որ այս հարցի մէջ չա՛ռ ունեցող բոլոր պետութիւնները, ընդհանրապէս, հիմք ընդունեցին Զինատանի բաժանմունքի խուսափելու ինչ վերաբերում է Եանցէի հովտին, բաւականաչափ յայտնի է, որ Անգլիայի հետ միասին չա՛ռ ունեն նրա մէջ եւ միւս պետութիւններից չա՛ռ տերը: Որքան դա վերաբերում է Գերմանիայի-դ

